ՌՍԴԲԿ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ 75-ԱՄՅԱԿԸ

ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ԿԵՏ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Մեր կուսակցությունն իր գոյության ընթացքում ունեցել է 25 համագումար։ 25 անգամ նրա լավագույն ներկայացուցիչները հավաքվել են վճռելու հերթական անելիքներն ու խնդիրները, որոշելու կուսակցության գործունեության գլխավոր ուղղությունները զարգացման առաջիկա ժամանակահատվածներում։ Յուրաքանչյուր համագումար նշանակալից երևույթ է, կարևոր ուղենիշ կուսակցության և ժողովրդի կյանքում, մի նոր ասպիճան՝ մեր առաջընթացի ճանապարհին։ Կուսակցության համագումարների շարքում յուրահատուկ տեղ ունի II համագումարը, որը ստեղծեց նոր տիպի կուսակցություն, բոլշևիկների կուսակցություն։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը ասել է. «Բոլշևիզմը որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական կուսակցություն գոյություն ունի 1903 թվականից»[1]։

Ռուսասանը XX դ. սկզբներին համաշխարհային իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետն էր. նրա առավել թույլ օղակը։ Ցարական Ռուսաստանում միահյուսվում էին աշխատանքի և կապիտալի, զարգացող կապիտալիզմի և ֆեոդալական-կալվածատիրական մնացուկների, բարձր զարգացած արդյունաբերական շրջանների և հետամնաց ծայրամասերի միջև եղած հակասությունները։ Չնայած Ռուսասանն ավելի ուշ ոտք դրեց կապիտալիզմի զարգացման ուղին, սակայն ճորտատիրական իրավունքի վերացումից հետո այդ պրոցեսը զգալիորեն արագացավ։

Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց թատերարեմ ելավ բանվոր դասակարգը։ Ռուսաստանում անցյալ դարի 90-ական թվականների սկզբին հաշվվում էր 10 միլիոն վարձու բանվոր, իսկ 1897 թ.՝ 14,2 միլիոն։ 1905 թ. նախօրյակին միայն արդյունաբերական, լեռնահանքային և երկաթուղային բանվորների թիվը կազմում էր ավելի քան 3 միլիոն[2]։ Ռուսասանի բանվոր դասակարգն աչքի էր ընկնում իր համակենտրոնացմամբ։ Այսպես, օրինակ, 500 և ավելի բանվոր ունեցող գործարաններում աշխատում էր Ռուսաստանի բոլոր բանվորների գրեթե կեսը[3]։

Հակասությունները սրվել էին նաև կալվածատերերի և գյուղացիության միջև։ Չնայած ճորտատիրական իրավունքի վերացմանը, երկրում պահպանվում էին ճորտատիրական բաղմաթիվ մնացուկներ, որոնք խճճում էին Ռուսաս-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 9։

2 «Вопросы истории КПСС», 1978, № 3, стр. 64.

3 Նույն տեղում։

տանի պետական ու հասարակական կյանքը, արգելակում երկրի հետագա զարգացումը։ Ֆեոդալիզմի գլխավոր մնացուկը կալվածատիրական հողատիրության պահպանումն էր, խոշոր լատիֆունդիաների առկայությունը, որը ծնում էր գյուղացիության սակավահողություն և շահագործում, մի հանգամանք, որը գյուղացիներին հեղափոխական պայքարի էր մղում։

Ռուսաստանը, ինչպես հայանի է, բազմազգ պետություն էր։ Ազգային ծայրամասերում բնակվող ոչ ռուս ժողովուրդները, որոնք կազմում էին բնակչության կեսից ավելին, դտնվում էին կրկնակի՝ ռուս և ազգային շահագործող դասակարդերի լծի տակ։ Ինքնակալությունը խեղդում էր ազգային կուլտուրան, թշնամանք սերմանում տարբեր ազգերի միջև։ Այս ամենը նրանց պայքարի էր մղում ընդդեմ ինքնակալության։ Բանվոր դասակարգի խնդիրն էր դլխավորել այդ պայքարը, հանախմբել ցարիզմի կողմից ճնշվող ժողովուրդներին։ Դա ժողովրդական հեղափոխության հաղթանակի կարևոր պայմաններից մեկն էր։ Այս ամենի հետևանքով XX դ. սկզբին միջազդային հեղափոխական շարժման կենտրոնը փոխադրվեց Ռուսաստան[4]։ Այնտեղ հասունանում էր ժողովրդական հեղափոխությունը։ 1895 թ. մինչև 1904 թ., ոչ լրիվ տվյալներով, Ռուսաստանում տեղի է ունեցել 1765 դործադուլ՝ 424 հազար մասնակիցներով[5]։ Սկսվեց աղատադրական պայքարի պրոլետարական փուլը և բանվոր դասակարդը կանդնեց ինքնակալության ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարի գլուխ։ «Պատմությունը,—դրում է Վ. Ի. Լենինը,—այժմ մեր առջև դրել է մեր ծավորագույն մի խնդիր, որ ամենաճեղափոխականն է հանդիսանում որևէ այլ երկրի պրոլետարիատի բոլոր մեր ծավորագույն խնդիրներից։ Այդ խնդրի իրականացումը, ոչ միայն եվրոպական, այլ նաև (կարող ենք մենք այժմ ասել) ասիական ռեակցիայի ամենահզոր նեցուկի խորտակումը ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազդային հեղափոխական պրոլետարիատի ավանդարար»[6]։

Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումը հրամայական պահանջում էր ստեղծել մարքսիստական կուսակցություն, այն հզոր լծակը, որն ընդունակ էր ղեկավարելու հեղափոխությունը, «դուռ տալ» Ռուսաստանը, բանվոր դասակարդին, աշխատավորական մյուս խավերին գրոհի առնել ինքնակալության դեմ։ Հարկավոր էր այնպիսի կուսակցություն, որը կարողանար գալիք բուրժուադեմոկրատական հեղափոխության մեջ ապահովել պրոլետարիատի ղեկավար դերը։ «Մեր առաջ,—դրում էր Վ. Ի. Լենինը,—իր ամբողջ ուժով կանդնած է թշնամու ամրոցը, որաեղից մեր գլխին ռումբերի և դնդակների աարափ է անդում, խլելով մեր լավադույն մարտիկների կյանքը։ Մենք պետք է գրավենք այդ ամրոցը, և մենք կդրավենք այն, եթե արթնացող պրոլեաարիատի բոլոր ուժերը միացնենք ռուս հեղափոխականների բոլոր ուժերին և դարձնենք մի կուսակցություն, որին կձդտի այն ամենը, ինչ Ռուսաստանում կենդանի է ու ազնիվ»[7]։

---

4 Այս մասին հանգամանորեն տե՛ս «Некоторые вопросы перемещения центра международного революционного движения в Россию» («Вопросы истории КПСС», 1978, № 3).

5 Նույն տեղում, էջ 65։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 492։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 477։

Մեր հարյուրամյակի արշալույսին, երբ դրվում էին կուսակցության հիմնաքարերը, Վ. Ի. Լենինը, ձևափոխելով Արքիմեդի հայտնի գարձվածքը, ասել է. «Տվեք մեզ հեղափոխականների կազմակերպություն և մենք շուռ կտանք Ռուսաստանը»[8]։ Այդպիսի կազմակերպության ստեղծումը անքակտելիորեն կապված է Վ. Ի. Լենինի անվան հետ։ 1898 թ. հրավիրվեց կուսակցության առաջին համագումարը, որը որոշեց Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միավորել մեկ միասնական կազմակերպության՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ։ Սակայն, հանգամանքների բերումով, այդ որոշումը գործնականում չիրագործվեց։ Համագումարը չընդունեց կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, իսկ Կենտկոմի անդամները շուտով ձերբակալվեցին։ Համագումարից հետո փաստորեն ՌՍԴԲԿ-ն կազմված էր անջատ-անջատ խմբակներից, որոնք միմյանց հետ կապված չէին ո՛չ կազմակերպական տեսակետից, ո՛չ էլ գաղափարապես։ Պրոլետարական կուսակցության ստեղծումը, որը կանգնած էր Ռուսաստանի հեղափոխականների առջև, կատարվեց XX դ. սկզբին։ Վ. Ի. Լենինը և նրա համախոհները ստիպված եղան մի քանի տարի հսկայական ջանքեր գործադրել միաձույլ, միասնական հեղափոխական մարքսիստական կուսակցություն ստեղծելու համար։

Կուսակցության ստեղծմանը նախորդեց Վ. Ի. Լենինի գաղափարական-տեսական անգուլ աշխատանքը։ Նա մշակեց և գործնականում իրականացրեց կուսակցության ստեղծման պլանը, գաղափարապես ջախջախեց լիբերալ նարոդնիկներին, լեգալ մարքսիստներին, էկոնոմիստներին։ Առանց դրա անհրաժեշտ էր ապահովել մարքսիզմի միացումը բանվորական շարժման հետ։

Կուսակցության ստեղծման համար վիթխարի աշխատանք կատարեց Լենինյան «Իսկրա»-ն, որը գաղափարապես և կազմակերպչորեն նախապատրաստեց Ռուսաստանում մարքսիստական կուսակցության հիմնադրումը։ Պայքարելով «Էկոնոմիզմ»-ի դեմ, «Իսկրա»-ն բանվորներին ցույց էր տալիս, որ էկոնոմիստները բանվորական շարժման մեջ բուրժուական ազդեցության տարածողներն են, որ պրոլետարիատը չի կարող սահմանափակվել միայն անտեսական պայքարով, ինչպես քարոզում էին էկոնոմիստները։ Ուրայն դոյություն ունեցող կարգերի դեմ քաղաքական լայն պայքարը պրոլետարիատին կդարձնի համաժողովրդական շարժման ավանդարար և կհանդեցնի ինքնակալության ու կապիտալիզմի լիակատար վերացմանը։ Մինչև միավորվելը և միավորվելու համար, բացատրում էր «Իսկրան»-ն, պետք է սահմանազատվել ամենից առաջ «էկոնոմիզմ»-ից, որը միջադային օպորտունիզմի տարատեսակն էր Ռուսաստանում և գլխավոր խոչընդոտը կուսակցության ստեղծման ճանապարհին։

Հեղափոխական շարքերի համալրման համար խոշոր նշանակություն ունեցան կուսակցության ծրագրի նախագծի մշակումն ու հրապարակումը «Իսկրա»-ի խմբագրության կողմից։ Ծրագրի նախագծի քննարկումը տեղական կազմակերպություններին օգնեց հայտնաբերելու գաղափարական տատանումները և տեսական սխալները, դրանով իսկ նպաստելով հեղափոխական ուժերի համախմբմանը։ Գրեթե երեք տարի իսկրայական դրոշը գաղա-

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 622։

փարտպես ու ազատակերպչորեն համախմբում էր պրոլետարական մարտիկներին, տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին։ ՌՍԴԲԿ II համագումարի նախօրյակին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները կանգնեցին «Իսկրա»-ի տեսակետի վրա։ Իսկրայական ուղղությունը հաղթանակեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում, մի հանգամանք, որը կարևոր նշանակություն ունեցավ կուսակցությունն II համագումարի հրավիրման և նրա աշխատանքի հաջող ավարտի համար։

Հեղափոխական մարքսիստական կուսակցության ստեղծման համար մղվող պայքարում հսկայական դեր կատարեց Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը, որը լույս տեսավ 1902 թ. մարտին։ Գրքի միջով կարմիր թելի պես անցնում է այն գլխավոր միտքը, որ կուսակցությունը բանվորական շարժման ղեկավար և կազմակերպող ուժն է։ Էկոնոմիստները, ինչպես հայտնի է, խոնարհվում էին տարերային բանվորական շարժման առջև, նսեմացնում հեղափոխական տեսության, սոցիալիստական գիտակցականության, կազմակերպվածության նշանակությունը, ժխտում էին մարքսիստական կուսակցության ղեկավար դերը պրոլետարիատի դասակարգային պայքարում։ Վ. Ի. Լենինը «Ի՞նչ անել» գրքում մերկացնում է «էկոնոմիզմ»-ի՝ միջազգային օպորտունիզմի այդ տարատեսակի, գաղափարական ակունքները։ Նա ցույց է տալիս, որ առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել այն կուսակցությունը, որը ղեկավարվում է առաջավոր տեսությամբ։ Այդպիսի տեսություն է մարքսիզմը։ Բանվոր դասակարգի համար շատ կարևոր է ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև գաղափարական պայքարը։ Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ վերդասակարգային կամ ապադասակարգային գաղափարախոսություն չկա։ Կապիտալիստական հասարակարգում դոյություն ունի երկու միմյանց հակադիր գաղափարախոսություն՝ բուրժուական և սոցիալիստական։ Սոցիալիստական գաղափարախոսությունն արտահայտում է բանվոր դասակարգի արմատական շահերը։ Բանվոր դասակարգը տարերայնորեն գնում է դեպի սոցիալիզմ և հեշտությամբ յուրացնում այն։ Սակայն բանվորական շարժումը, եթե չի միացել սոցիալիստական գիտակցությանը, անզեն է բուրժուական գաղափարախոսության առջև։ Բուրժուական գաղափարախոսությունն իր ծագումով ավելի հին է, տարածվելու ավելի մեծ հնարավորություն ունի։ «Հարցը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— գրվում է միայն այսպես. բուրժուակա՞ն, թե սոցիալիստական գաղափարախոսություն։ Միջինը չկա այստեղ... Ուստի սոցիալիստական գաղափարախոսության ամեն մի նվաստացում, ամեն մի հեռացում նրանից՝ ինքնին նշանակում է բուրժուական գաղափարախոսության ուժեղացում»[9]։ «...Ամեն մի խոնարհում բանվորական շարժման տարերայնության առաջ, «գիտակցական տարրի» դերի, սոցիալ-դեմոկրատիայի դերի ամեն մի նվազեցում նշանակում է դրանով իսկ միանգամայն անկախ նրանից, ցանկանո՞ւմ է արդյոք նվազեցնողն այդ, թե ոչ,— բուրժուական գաղափարախոսության ազդեցության ուժեղացում բանվորների վրա»[10]։

Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը հսկայական դեր կատարեց «էկոնո-

---

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 507։
10 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 5, էջ 505։

միդմ»-ի գաղափարակոն ջախջախման, մարքսիզմի հիման վրա կուսակցական կադրերի համախմբման և ՌՍԴԲԿ II համագումարի նախապատրաստման գործում։

ՌՍԴԲԿ II համագումարը կայացավ 1903 թ. հուլիսի 17 (30)-ից—օգոստոսի 10 (23)-ը։ Սկզբում համագումարը նիստեր էր ունենում Բրյուսելում, բայց բելգիական ոստիկանության հետապնդումների պատճառով ընդհատեց իր աշխատանքը և այն շարունակեց Լոնդոնում։ Եթե առաջին համագումարը տևեց ընդամենը 3 օր և ունեցավ 6 նիստ, ապա II համագումարն ունեցավ 37 նիստ։ ՌՍԴԲԿ I համագումարին ներկա էր ընդամենը 9 պատգամավոր՝ 5 կազմակերպությունից։ II համագումարում կար 43 պատգամավոր (51 ձայնով), որոնք ներկայացնում էին 26 կուսակցական կազմակերպություն։ II համագումարի գլխավոր խնդիրը, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, այն էր, որ ստեղծի իսկական պրոլետարական կուսակցություն սկզբունքային ու կազմակերպական այն հիմունքներով, որոնք առաջ էր քաշել ու մշակել «Իսկրա»-ն։

Համագումարում «Իսկրա»-ն ուներ մեծամասնություն՝ 33 ձայն։ Հակաիսկրայականները ունեին 8 ձայն (3 էկոնոմիստ և 5 բունդական)։ Կենտրոնի ներկայացուցիչները կամ ճահիճը, ինչպես նրանց անվանում էր Վ. Ի. Լենինը, ունեին 10 ձայն։ Կայուն, հետեողական իսկրայականները՝ Վ. Ի. Լենինի կողմնակիցները, ունեին 24 ձայն։ Այսպես կոչված «փափուկ» իսկրայականները (Մարտովի կողմնակիցները)՝ ապագա մենշեիկները՝ 9 ձայն։ Վ. Ի. Լենինի կողմից գլխավորվող կայուն իսկրայականները համագումարում պայքարում էին միաձույլ ու մարտական, բանվորական շարժման հետ սերտորեն կապված, արեմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից արմատապես տարբեր, նոր տիպի կուսակցության համար։ Վ. Ի. Լենինի հետ միասին համագումարում հանդես էր գալիս Գ. Վ. Պլեխանովը, թեպետև որոշ հարցերում նա տատանումներ էր ցուցաբերում։ Հանդես գալով էկոնոմիստ Ակիմովի դեմ, Գ. Վ. Պլեխանովը հայտարարեց. «...նա ամեն կերպ ուզում է ինձ բաժանել Լենինից։ Բայց... ես չեմ բաժանվի Լենինից և հուսով եմ, որ նա ես մաադիր չէ բաժանվել ինձանից»[11]։

ՌՍԴԲԿ II համագումարի նշանակությունն ամենից առաջ այն է, որ ընդունեց կուսակցության ծրագիրը։ Ծրագրի մի շարք սկզբունքային դրույթների շուրջը համագումարում ծավալվեց սուր պայքար։ Այսպես, բունդական լիբերը և էկոնոմիստներ Ակիմովն ու Մարտինովը դեմ դուրս եկան պրոլետարիատի դիկտատուրայի պահանջը ծրագրի մեջ մտցնելուն։ Իրենց այդ առաջարկությունը նրանք պատճառաբանում էին նրանով, որ նման պահանջ առաջ չի քաշել Արեմուտքի սոցիալ-դեմոկրատական ոչ մի կուսակցություն։ Նրանց բուռ էության պաշտպանում էր Տրոցկին։ Չհամարձակվելով բացահայտորեն հանդես գալ պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ կետը ծրագրի մեջ մտցնելու դեմ, Տրոցկին հայտարարեց, թե այդպիսի դիկտատուրայի իրականացումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կուսակցությունն ու բանվոր դասակարգը «նույնանալու մոտ» կլինեն, և երբ պրոլետարիատը կկազմի «ազգի մեծամասնությունը»[12]։ Համագումարը մերժեց օպորտունիստների

---

11 «Второй съезд РСДРП. Протоколы», М., 1959, стр. 137.

12 Նույն տեղում, էջ 136։

առաջարկությունը։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մահից հետո միջազգային բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ ընդունվեց մի ծրագիր, որտեղ պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարն առաջ էր քաշվում որպես բանվոր դասակարգի կուսակցության հիմնական խնդիր։

Համագումարում սուր պայքար ծավալվեց ագրարային հարցի շուրջը։ Ծրագրի ագրարային մասը, որը գրել էր Վ. Ի. Լենինը, պարունակում էր այնպիսի պահանջներ, որոնց իրագործումը պետք է ոչնչացներ ճորտատիրության մնացուկները գյուղում և պայմաններ ապահովեր դասակարգային պայքարի ազատ զարգացման համար։ Ծրագիրը պահանջում էր վերացնել փրկագնման վճարումները, գյուղացիներին վերադարձնել օտարեցվածները։ Վերջիններս վերադարձնելու պահանջը Վ. Ի. Լենինը դիտում էր որպես ագրարային հարցի լուծման առաջին քայլ։ Ծրագիրն արտահայտում էր գյուղացիության շահերը, նպաստում բանվոր դասակարգի ու գյուղացիության հեղափոխական դաշինքի ձևավորմանը։ Օպորտունիստները գյուղացիությանը պրոլետարիատի դաշնակից չէին համարում և համառորեն պայքարում էին, որպեսզի ծրագրից հանվի ճորտատիրական մնացուկների վերացման պահանջը։ Համագումարը մերժեց օպորտունիստների այդ առաջարկությունները։ Ռուսաստանի համար, որը բազմազգ երկիր էր, կարևոր նշանակություն ունեին կուսակցության ծրագրային պահանջներն ազգային հարցում։ Կուսակցության ազգային ծրագրի հիմնական դրույթները Վ. Ի. Լենինը մշակել էր դեռ մինչև համագումարը։ Ահա այդ դրույթները. Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչում, քաղաքացիների իրավահավասարություն՝ անկախ ազգությունից, բանվորների միավորում միասնական դասակարգային կազմակերպությունների՝ կուսակցության, արհմիությունների և այլնի մեջ։ Այս դրույթներն արտացոլվել էին կուսակցության ծրագրի նախագծում։ Ազգերի ինքնորոշման իրավունքի լոզունգին համագումարում բունդականները հակադրեցին կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, որը բանվորների ուժերը մասնատում էր ազգային հատկանիշով ստեղծված կազմակերպություններում, խախտում պրոլետարիատի դասակարգային, ինտերնացիոնալ միասնությունը, դրանով իսկ վնասելով համառուսական բանվորական, հեղափոխական շարժմանը։ Համագումարը մերժեց բունդականների պահանջը և ընդունեց լենինյան ազգային ծրագիրը, որի համաձայն ազգերն ունեն ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև լրիվ անջատումը և ինքնուրույն պետության կազմելը։ Ազգերը կարող էին ինքնուրույն որոշել իրենց ճակատագիրը։ Նման ծրագիրը արտացոլում էր Ռուսաստանի մեջ մտնող բոլոր ժողովուրդների շահերը։ Այն բանվորներին դաստիարակում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, նպաստում ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը՝ ցարիզմի դեմ մղվող համատեղ պայքարում։

ՌՍԴԲԿ II համագումարն ընդունեց «Իսկրա»-ի առաջարկած ծրագիրը, որը բաղկացած էր երկու մասից՝ մինիմում ծրագրից և մաքսիմում ծրագրից։ Մինիմում ծրագիրը սահմանում էր պրոլետարիատի խնդիրները բուրժուադեմոկրատական հեղափոխության մեջ. ինքնակալության տապալում, դեմոկրատական հանրապետության հաստատում, ճորտատիրական մնացուկների ոչնչացում գյուղում, 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանում, ազգերի իրավահավասարության իրականացում։ Մաքսիմում ծրագրում խոսվում էր

կուսակցության վերջնական նպատակի՝ սոցիալիզմի կառուցման մասին, որին կարելի էր հասնել սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով։ Այսպիսով համագումարն ընդունեց մարքսիստական ծրագիր, որի հիման վրա ամրապնդվեց բոլշևիկյան կուսակցությունը։

ՌՍԴԲԿ II համագումարն ընդունեց նաև կուսակցության կանոնադրությունը, որի մասին զեկուցումով հանդես եկավ Վ. Ի. Լենինը։ Կանոնադրության, հատկապես նրա առաջին կետի քննարկումն անցավ սուր պայքարի պայմաններում։ Կանոնադրության առաջին կետը վերաբերում էր կուսակցական շինարարության արմատական հարցերից մեկին՝ կուսակցության անդամության հարցին։ Լենինյան ձևակերպմամբ կուսակցության անդամ կարող էր լինել ամեն ոք, ով ընդունում է նրա ծրագիրը և օժանդակում կուսակցությանն ինչպես նյութական միջոցներով, այնպես էլ կուսակցական կազմակերպություններից որևէ մեկին անձամբ մասնակցելով։ Լենինյան ձևակերպումը դժվարացնում էր ոչ-պրոլետարական, խորթ տարրերի մուտքը կուսակցության մեջ։ «Ավելի լավ է,—դրում էր Վ. Ի. Լենինը,—տասը աշխատող իրենց կուսակցության անդամ չանվանեն... քան թե մի շաղակրատող իրավունք ու հնարավորություն ունենար կուսակցության անդամ լինելու... Մեր խնդիրն է՝ պահպանել մեր կուսակցության ամրությունը, կայունությունն ու մաքրությունը։ Մենք պետք է աշխատենք կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունն ավելի, սվելի ու ավելի բարձրացնել»[13]։

Կուսակցության անդամության վերաբերյալ Լենինյան սկզբունքի դեմ համագումարում հանդես եկավ Մարտովը։ Մարտովյան ձևակերպմամբ կուսակցության անդամ կարող էր լինել ամեն ոք, ով ընդունում է նրա ծրագիրը և նրան ցույց է տալիս «կանոնավոր անձնական աջակցություն»։ Ըստ Մարտովի տեղական կազմակերպության աշխատանքին մասնակցելը պարտադիր չէ։ Նման ձևակերպումը կուսակցության դռները բաց էր անում բոլոր նրանց առջև, ովքեր համակրում էին նրան, իսկ այդպիսի մարդկանց թիվը հեղափոխության վերելքի ժամանակ քիչ չէր ընակչության նաև բուրժուական խավերի շրջանում։ Նրանք չէին ուզում աշխատել կուսակցության սառրին ըջիջներում, ենթարկվել կուսակցության կարգապահությանը։ Դա կարող էր հանգեցնել հեղհեղուկ, մանրբուրժուական կազմակերպության սաեղծմանը, կազմակերպություն, որն ընդունակ չէր լինի գլխավորելու բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը։ Համագումարը ձայների չնչին մեծամասնությամբ ընդունեց կանոնադրության առաջին կետի մարտովյան ձևակերպումը։

ՌՍԴԲԿ II համագումարն ընարեց եուսակցության Կենտկոմ և կենարոնական օրգանի խմբագրություն։ Ընտրությունների ժամանակ Վ. Ի. Լենինի կողմնակիցները շահեցին ձայների մեծամասնություն, վճռական հաղթանակ սարան օպորտունիզմի նկատմամբ։ Այդ ժամանակից Վ. Ի. Լենինի կողմնակիցները, ովքեր կուսակցության ղեկավար մարմինների ընարությունների ժամանակ ստացան ձայների մեծամասնություն, սկսեցին կոչվել բոլշևիկներ, իսկ Վ. Ի. Լենինի հակառակորդները՝ մենշևիկներ։

Բոլշևիկների հաղթանակը համագումարում նախապատրաստված էր սոցիալ-դեմոկրատական շարժման ամբողջ նախորդ զարգացմամբ։ Համագու-

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 641—642։

մարում կուսակցության շահերն ընդդեմ օպորտունիզմի վճռականորեն պաշտպանում էին խոշորագույն կոմիտեների ներկայացուցիչներ Ա. Շոտմանը, Ն. Բաումանը, Բ. Կնունյանցը, Ս. Գուսևը, Պ. Կրասիկովը, Ռ. Զեմլյաչկան, Լ. Կնիպովիչը, Ա. Սառպանին, Ս. Ստեպանովը, Դ. Ուլյանովը (Վ. Ի. Լենինի եղբայրը)։

Համագումարում լենինյան դիրքերի ակտիվ ու հետևողական պաշտպանությամբ աչքի ընկավ Բ. Կնունյանցը։ Նա մասնակցեց գրեթե բոլոր հիմնական հարցերի շուրջը ծավալված բանավեճերին և լենինյան դիրքերից արտահայտեց իր ասելիքները։ Համագումարի սղագրության մեջ նրա անունը 80 անգամ հիշատակվում է[14]։ Այսպես, կուսակցության մեջ Բունդի տեղի հարցը քննարկելիս Բ. Կնունյանցն ասաց. «Ես հաճույքով եմ ընդգծում այն փաստը, որ մեզանում միանգամայն բացակայում է կազմակերպչական սեպարատիզմը, որը վերջին ժամանակներս այնքան ուժեղ է Բունդի մեջ։ Մեր քաղաքներից յուրաքանչյուրում գոյություն ունեն կուսակցական կոմիտեներ. որոնք գործում են մի քանի լեզուներով... Եվ չնայած դրան, մինչև այժմ դրանից ոչ մի անհարմարություն առաջ չի եկել, և շարժման հաջողությունը կովկասում չի թուլացել։ Ըստ իս, ներկայումս Բունդում ակտիվ գործող տենդենցը սոցիալիզմի հետ ոչ մի ընդհանուր բան չունի»[15]։ Բ. Կնունյանցը կազմել և համագումարին է ներկայացրել «Բաքվի կոմիտեի գեկուցումը»[16] փաստաթուղթը, որը նվիրված է կոմիտեի գործունեությանը։ Կամ մի ուրիշ փաստ։ Նա մեծ ակտիվություն ցուցաբերեց եուսակցության ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինն իր «Մի քայլ առաջ, երեք քայլ հետ» գրքում, վերլուծելով ՌՍԴԲԿ II համագումարում կազմակերպական հարցերում առաջացած տարաձայնությունները, գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել կուսակցական պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի (Բ. Կնունյանցի—Գ. Ա.) ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ո՞չ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց։ Ասենք՝ չի էլ կարելի վիճարկել այնպիսի տարրական, այբբենական ճշմարտություններ, որոնց մոռացումն արգեն ինքն ընկ. Ռուսովը արգարացի կերպով բացատրում էր միայն «ներվային գրգիռով»[17]։

ՌՍԴԲԿ II համագումարի գլխավոր արդյունքը նոր տիպի կուսակցության, եռմունիստական կուսակցության ստեղծումն էր։ Համագումարը շրջադարձային կետ հանդիսացավ Ռուսաստանի և միջազգային բանվորական շարժման մեջ։ Ի դեմս բոլշևիկյան կուսակցության առաջին անգամ պրոլետարիատը ստացավ մի կազմակերպություն, որն ընդունակ էր պատմական նոր պայմաններում հաջողությամբ ղեկավարել նրա պայքարն իր սոցիալական ազատագրության համար։ Մեր կուսակցությունն օրինակ դարձավ մյուս երկրների հեղափոխական շարժման համար։ «ՍՄԿԿ համագումարները՝ սկսած Լենինի ժամանակներից մինչև այսօր,—կուսակցության XXV համա-

---

14 Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հ. 1, Երևան, 1967, էջ 239։

15 «Второй съезд РСДРП. Протоколы», стр. 61.

16 Նույն տեղում, էջ 514—532։

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 399—400։

զումարում ասաց Ֆ. Կասարոն,— ներկայացնում են փորձի բաղմահարուստ աղբյուր, որից սովորում են աշխարհի բոլոր հեղափոխականները»[18]։

Յոթ ու կես տասնամյակ է մեղ բաժանում ՌՍԴԲԿ II համագումարից։ Այս տարիներին կուսակցությունը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, համախմբեց աշխատավորներին և երեք հեղափոխությունների բովով նրանց գրոհի տարավ ընդդեմ ինքնակալության և բուրժուազիայի։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը XX դ. գլխավոր իրադարձությունն է, արմատապես փոխեց մեր երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական կերպարանքը, միջազգային ազատագրական շարժումը հասցրեց նոր, ավելի բարձր մակարդակի, «ամբողջ աշխարհին մատնանշեց սոցիալիզմի ուղիները և բուրժուազիային ցույց տվեց, որ մոտենում է նրա տիրապետության վերջը»[19]։

---

18 «Սովետական Հայաստան», 27. II. 1976։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 37։